

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ**

14 դեկտեմբերի, 2023 թ.

N 34- L

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.10 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցվելուց հետո և Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2023 թ. դեկտեմբերի 14-ի N 34-Լ որոշման

ԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ նաև՝ «Պալատ») անդամների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառման կարգը (այսուհետ նաև՝ **Կարգ**) մշակվել է համաձայն «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի (այսուհետ՝ **Օրենք**), «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի, «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի, Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների, Աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման ընթացակարգերի (այսուհետ՝ **Արտաքին գնահատման ընթացակարգեր**), Մասնագիտական էթիկայի կանոնագրքի, Պալատի կանոնադրության և այլ փոխկապված իրավական ակտերի (այսուհետ՝ **Պալատի անդամների գործունեությունը կարգավորող իրավական ակտեր**):
- 1.2. Սույն Կարգը սահմանում է Պալատի անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու ընթացակարգը, մասնավորապես՝ Պալատի անդամների նկատմամբ կիրառվող կարգապահական վարույթի ընթացակարգը և առանձնահատկությունները, Պալատի անդամի կողմից կատարված խախտման բնույթը, վարույթի ընթացքում Պալատի անդամի իրավունքներն ու պարտականությունները և այլն:
- 1.3. Հիմնական հասկացությունները և տերմինները (եզրույթները), որոնք օգտագործվում են սույն կարգում՝
- 1) **աուդիտորական կազմակերպություն**՝ Պալատի անդամ հանդիսացող իրավաբանական անձ, որն իրավունք ունի մատուցելու աուդիտորական ծառայություններ.
 - 2) **աուդիտոր**՝ Պալատի անդամ հանդիսացող ֆիզիկական անձ, որն ունի աուդիտորի որակավորում.
 - 3) **փորձագետ հաշվապահ**՝ Պալատի անդամ հանդիսացող ֆիզիկական անձ, որն ունի փորձագետ հաշվապահի որակավորում.
 - 4) **Պալատի խորհուրդ**՝ Պալատի մշտապես գործող կոլեգիալ կառավարման մարմին է, որը Պալատի ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում ղեկավարում է Պալատի

գործունեությունը.

5) **Աշխատանքային խումբ՝** Աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման համար ձևավորված աշխատանքային խումբ.

6) **Հանձնաժողով՝ Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովը** Պալատի մշտական գործող հատուկ մարմին է, որի ստեղծման հիմնական նպատակը.

- աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման ապահովումն է: Աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման առարկա է հանդիսանում աուդիտորական կազմակերպության և (կամ) աուդիտորի կողմից «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Աուդիտորական գործունեության մասին» օրենքների, Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների և Մասնագիտական էթիկայի կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը,

- փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորների նկատմամբ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» և «Աուդիտորական գործունեության մասին» օրենքներով, ինչպես նաև Պալատի ներքին իրավական այլ ակտերով ներկայացվող պահանջների պահպանման արտաքին գնահատման ապահովումն է, արտաքին գնահատման արդյունքներով խախտումների բացահայտումն է (այդ թվում՝ Պալատի՝ տվյալ հանձնառությամբ օժտված համապատասխան մարմինների և աշխատակազմի ուսումնասիրությունների միջոցով), ուսումնասիրության/բացահայտման արդյունքները, ինչպես նաև այդ խախտումների հետ կապված համապատասխան կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու

վերաբերյալ առաջարկությունները Պալատի խորհրդին ներկայացնելը:

- 7) **Արտաքին գնահատում՝** Պալատի անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպության և աուդիտորի կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման նկատմամբ իրականացվող, ինչպես նաև՝ Պալատի անդամ հանդիսացող փորձագետ հաշվապահի և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորի կողմից «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» և «Աուդիտորական գործունեության մասին» օրենքների պահանջների պահպանման նկատմամբ իրականացվող արտաքին գնահատում:

2. Կարգի նպատակը

2.1. Կարգի հիմնական նպատակներն են.

- Պալատի անդամների կողմից իրավական ակտերի պահանջների պատշաճ կատարման ապահովումը:
- Պալատի անդամների կողմից մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ հանրության վստահության ապահովումը:
- Պալատի անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների անաչառ կիրառումը:

3. Կարգապահական վարույթը

3.1. Կարգապահական վարույթն իրականացվում է կարգապահական խախտում կատարելու հանգամանքների ուսումնասիրության օրինականության, օբյեկտիվության, ամբողջականության և բազմակողմանիության սկզբունքների հիման վրա:

4. Կարգապահական խախտում և կարգապահական պատասխանատվություն

- 4.1. Կարգապահական խախտում է համարվում Պալատի անդամի կողմից Պալատի անդամների գործունեությունը կարգավորող իրավական ակտերով նախատեսված պահանջների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, որը կարող է դրսևորվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ՝ (այսուհետ նաև՝ **Կարգապահական խախտում**):
- 4.2. Կարգապահական պատասխանատվություն է համարվում սույն Կարգի 4.1. կետով նախատեսված խախտումների արդյունքում Պալատի անդամի նկատմամբ կիրառվող օրենքով սահմանված համապատասխան պատասխանատվությունը (այսուհետ նաև՝ **Կարգապահական պատասխանատվություն**):

5. Կարգապահական պատասխանատվության սուբյեկտները

- 5.1. Կարգապահական պատասխանատվության սուբյեկտներ են համարվում Պալատի անդամները:

6. Կարգապահական պատասխանատվության միջոցները և դրանց կիրառման կարգը

- 6.1. Պալատն իր անդամների նկատմամբ կիրառում է հետևյալ կարգապահական պատասխանատվության միջոցները՝.
- 1) նախազգուշացում,
 - 2) տուգանք, ընդ որում, տուգանքի չափը սահմանված է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքով,
 - 3) Պալատին անդամակցության կասեցում,
 - 4) Որակավորման չեղարկում,
 - 5) Պալատին անդամակցության դադարեցում:
- 6.2. Սույն Կարգի 6.1. կետով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառման համար հիմք են հանդիսանում Պալատի անդամի մոտ արտաքին գնահատում իրականացնելու արդյունքում ստացված գնահատականները: Յուրաքանչյուր գնահատականի հավասարեցվում է համապատասխան պատասխանատվության միջոցը: Արտաքին գնահատման արդյունքներով տրվում է «1», «2», «3», «4», «5» կամ «6»

գնահատական՝ համաձայն «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի: Արտաքին գնահատումն իրականացվում է ՀՀ ֆինանսների նախարարի 7 հոկտեմբերի 2022թ. «Աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման ընթացակարգերը հաստատելու մասին» N 420-Ն հրամանի համաձայն:

6.3. Կիրառվող պատասխանատվության միջոցի հետ առնչվող ցանկացած տեսակի ծանուցում կարող է իրականացվել ինչպես առձեռն կամ փոստային ծանուցման եղանակով, այնպես էլ հասցեատիրոջ էլեկտրոնային հասցեին համապատասխան գրություն ուղարկելու եղանակով, որի ուղարկման փաստով կհամարվի, որ հասցեատերը ստացել է գրավոր տեղեկացումը:

6.4. **Նախազգուշացումը.**

6.4.1. Նախազգուշացումը աուդիտորական կազմակերպության, աուդիտորի և փորձագետ հաշվապահի նկատմամբ որպես կարգապահական պատասխանատվության միջոց կիրառվում է, եթե, Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն, արտաքին գնահատման արդյունքներով տրվել է «2» գնահատական:

6.4.2. Նախազգուշացումը, որպես կարգապահական պատասխանատվության միջոց, կիրառելու համար արտաքին գնահատման բացահայտումների թիվը և նշանակալիությունը սահմանված է Արտաքին գնահատման ընթացակարգերով:

6.4.3. Նախազգուշացումը նախատեսում է խախտումը թույլ տված աուդիտորական կազմակերպությանը, աուդիտորին կամ փորձագետ հաշվապահին գրավոր տեղեկացնել արտաքին գնահատման արդյունքում արձանագրված խախտումների անթույլատրելիության և ապագայում նման խախտումները կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու մասին:

6.4.4. Նախազգուշացումը որպես պատասխանատվության միջոց ուժի մեջ է մտնում Պալատի համապատասխան որոշման ընդունման օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրվանից: Պալատը որոշման ընդունման հաջորդ օրվանից սկսած՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մասին գրավոր տեղեկացնում է պատասխանատվության ենթարկվող անձին և

Հանրային վերահսկողության խորհրդին: Ընդ որում՝ տեղեկացումը կարող է իրականացվել նաև հասցեատիրոջ էլեկտրոնային հասցեին համապատասխան գրություն ուղարկելու եղանակով, որի ուղարկման փաստով կհամարվի, որ հասցեատերը ստացել է գրավոր տեղեկացումը:

6.4.5. Նախազգուշացումը որպես պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ Պալատի որոշումը կարող է բողոքարկվել Հանրային վերահսկողության խորհուրդ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

6.4.6. Աուդիտորական կազմակերպությունը արտաքին գնահատման վերջնական հաշվետվությամբ արձանագրված խախտումների և թերությունների շտկման գործողությունների և այդ գործողությունների կատարման ժամկետների (բայց ոչ ավելի, քան 6 ամիսը) վերաբերյալ տեղեկատվություն պետք է ներկայացնի Պալատին՝ արտաքին գնահատման վերջնական հաշվետվությունը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

6.5. **Տուգանքը.**

6.5.1. Տուգանքը աուդիտորական կազմակերպության նկատմամբ որպես կարգապահական պատասխանատվության միջոց կիրառվում է, եթե Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն, արտաքին գնահատման արդյունքներով տրվել է «3» գնահատական:

6.5.2. Տուգանքը, որպես կարգապահական պատասխանատվության միջոց, կիրառելու համար արտաքին գնահատման բացահայտումների թիվը և նշանակալիությունը սահմանված է Արտաքին գնահատման ընթացակարգերով:

6.5.3. Տուգանքի գումարի չափը սահմանվում է 500 000 ՀՀ դրամ:

6.5.4. Տուգանքի կիրառման վերաբերյալ Պալատի որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի համապատասխան որոշման ընդունման օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրվանից: Պալատը որոշման ընդունման հաջորդ օրվանից սկսած՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մասին գրավոր տեղեկացնում է պատասխանատվության ենթարկվող անձին և Հանրային վերահսկողության խորհրդին: Ընդ որում՝ տեղեկացումը կարող է

իրականացվել նաև հասցեատիրոջ էլեկտրոնային հասցեին համապատասխան գրություն ուղարկելու եղանակով, որի ուղարկման փաստով կհամարվի, որ հասցեատերը ստացել է գրավոր տեղեկացումը:

- 6.5.5. Աուդիտորական կազմակերպությունը տուգանքը վճարում է Պալատին՝ տուգանքի կիրառման վերաբերյալ Պալատի որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 60 օրացուցային օրվա ընթացքում:
- 6.5.6. Տուգանքը որպես պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ Պալատի որոշումը կարող է բողոքարկվել Հանրային վերահսկողության խորհուրդ՝ համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:
- 6.5.7. Աուդիտորական կազմակերպությունը արտաքին գնահատման վերջնական հաշվետվությամբ արձանագրված խախտումների և թերությունների շտկման գործողությունների և այդ գործողությունների կատարման ժամկետների (բայց ոչ ավելի, քան 6 ամիսը) վերաբերյալ տեղեկատվություն պետք է ներկայացնի Պալատին՝ արտաքին գնահատման վերջնական հաշվետվությունը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

6.6. Պալատին անդամակցության կասեցումը.

- 6.6.1. Պալատին անդամակցությունը կասեցվում է, եթե, Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն, արտաքին գնահատման արդյունքներով տրվել է «4» գնահատական կամ Օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում չի վճարվել տուգանքը:
- 6.6.2. Կասեցումը, որպես կարգապահական պատասխանատվության միջոց, կիրառելու համար արտաքին գնահատման բացահայտումների թիվը և նշանակալիությունը սահմանված է Արտաքին գնահատման ընթացակարգերով:
- 6.6.3. Պալատին անդամակցության կասեցման տևողությունը հաստատում է Պալատի խորհուրդը՝ Հանձնաժողովի առաջարկի հիման վրա: Պալատին անդամակցությունը կասեցվում է կասեցման վերաբերյալ Պալատի խորհրդի որոշմամբ

սահմանված ժամկետով, բայց ոչ ավելի, քան վեցամսյա ժամկետը:

6.6.4. Կասեցման տևողության ժամկետը սահմանվում է հետևյալ կերպ.

ա) եթե Արտաքին գնահատման ընթացակարգերով սահմանված նշանակալի բացահայտումների թիվը կազմում է 10-13, ապա կասեցման տևողությունը սահմանվում է 3 ամիս ժամկետով,

բ) եթե Արտաքին գնահատման ընթացակարգերով սահմանված նշանակալի բացահայտումների թիվը կազմում է 14-16, ապա կասեցման տևողությունը սահմանվում է 4 ամիս ժամկետով,

գ) եթե Արտաքին գնահատման ընթացակարգերով սահմանված նշանակալի բացահայտումների թիվը կազմում է 17-19, ապա կասեցման տևողությունը սահմանվում է 5 ամիս ժամկետով,

դ) եթե Արտաքին գնահատման ընթացակարգերով սահմանված նշանակալի բացահայտումների թիվը կազմում է 20 և ավել, ապա կասեցման տևողությունը սահմանվում է 6 ամիս ժամկետով,

ե) եթե նախորդ Արտաքին գնահատման արդյունքներով բացահայտված թերությունների վերացմանն ուղղված գործողությունները ամբողջությամբ իրականացված չեն, ապա կասեցման տևողությունը սահմանվում է 6 ամիս ժամկետով:

զ) եթե առկա է Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներից որևէ մեկի խախտում կամ Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անդամավճարների՝ Պալատի կողմից սահմանված ժամկետում չվճարման դեպք կամ Օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում տուգանքի չվճարման դեպք, կասեցման տևողությունը սահմանվում է մինչև խախտման վերացումը, բայց ոչ ավել քան 3 ամիսը:

6.6.5. Աուդիտորը, որի անդամակցությունը Պալատին կասեցվել է, կասեցման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում իրավունք չունի՝

1) մասնակցելու աուդիտորական գործունեության իրականացմանը կամ, «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի պահանջների համաձայն, աշխատելու միջին կազմակերպության, խոշոր կազմակերպության և հանրային

հետաքրքրություն ներկայացնող կազմակերպության գլխավոր հաշվապահ.

2) մասնակցելու Պալատի ընտրովի և մասնագիտական մարմինների աշխատանքներին:

6.6.6. Աուդիտորական կազմակերպությունը, որի անդամակցությունը Պալատին կասեցվել է, կասեցման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում իրավունք չունի՝

1) կնքելու աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր.

2) մինչև կասեցումը կնքված աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրերում կատարելու այնպիսի փոփոխություններ, որոնք կհանգեցնեն աուդիտորական կազմակերպության պարտավորությունների ավելացմանը:

6.6.7. Փորձագետ հաշվապահը և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորը, որի անդամակցությունը Պալատին կասեցվել է, կասեցման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում իրավունք չունի՝

1) «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի պահանջների համաձայն՝ աշխատելու միջին, խոշոր և հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպության գլխավոր հաշվապահ.

2) մասնակցելու Պալատի կանոնադրությամբ նախատեսված ընտրովի և մասնագիտական մարմինների աշխատանքներին:

6.6.8. Կասեցման վերաբերյալ Պալատի որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի համապատասխան որոշման ընդունման օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրվանից: Պալատը որոշման ընդունմանը հաջորդող օրվանից սկսած՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մասին գրավոր տեղեկացնում է պատասխանատվության ենթարկվող անձին և Հանրային վերահսկողության խորհրդին: Ընդ որում՝ տեղեկացումը կարող է իրականացվել նաև հասցեատիրոջ էլեկտրոնային հասցեին համապատասխան գրություն ուղարկելու եղանակով, որի ուղարկման փաստով կհամարվի, որ հասցեատերը ստացել է գրավոր տեղեկացումը:

- 6.6.9. Անդամակցության կասեցման վերաբերյալ Պալատի որոշումը կարող է բողոքարկվել Հանրային վերահսկողության խորհուրդ՝ կասեցման վերաբերյալ Պալատի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքարկման բավարարման դեպքում Հանրային վերահսկողության խորհրդի որոշման հիման վրա Պալատը կայացնում է անդամակցության կասեցումը դադարեցնելու վերաբերյալ որոշում:
- 6.6.10. Աուդիտորական կազմակերպությունը արտաքին գնահատման վերջնական հաշվետվությամբ արձանագրված խախտումների և թերությունների շտկման գործողությունների և այդ գործողությունների կատարման ժամկետների (բայց ոչ ավելի, քան 6 ամիսը) վերաբերյալ տեղեկատվություն պետք է ներկայացնի Պալատին՝ արտաքին գնահատման վերջնական հաշվետվությունը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
- 6.6.11. Աուդիտորական կազմակերպությունը, որի անդամակցությունը Պալատին կասեցվել է, կասեցման վերաբերյալ Պալատի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 10-օրյա ժամկետում Պալատին է ներկայացնում մինչև կասեցումը կնքված աուդիտորական ծառայությունների մատուցման գործող պայմանագրերի պատճենները: Սահմանված ժամկետում գործող պայմանագրերի պատճենները չտրամադրելը կամ տրամադրելուց խուսափելը դիտարկվում է որպես դրանց բացակայություն:

6.7. Աուդիտորի որակավորման չեղարկումը.

- 6.7.1 Աուդիտորի որակավորումը չեղարկվում է, եթե, Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն, արտաքին գնահատման արդյունքներով տրվել է «5» գնահատական: Նշված դեպքերից բացի, աուդիտորների որակավորման չեղարկման այլ հիմքերը սահմանվում են «Աուդիտորական գործունեության մասին» օրենքով:
- 6.7.2 Որակավորման չեղարկումը, որպես կարգապահական պատասխանատվության միջոց, կիրառելու համար արտաքին գնահատման բացահայտումների թիվը և նշանակալիությունը սահմանված է Արտաքին գնահատման ընթացակարգերով:

6.7.3 Աուդիտորի որակավորման չեղարկման վերաբերյալ Պալատի որոշումը կարող է բողոքարկվել Հանրային վերահսկողության խորհուրդ՝ չեղարկման վերաբերյալ Պալատի համապատասխան որոշման ընդունման օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում կամ դատական կարգով:

6.7.4 Բողոքարկման ընթացքում որակավորման չեղարկման վերաբերյալ Պալատի որոշումը կասեցվում է: Բողոքարկման ընթացքում աուդիտորի՝ Պալատին անդամակցությունը համարվում է կասեցված: Հանրային վերահսկողության խորհրդի կամ դատարանի կողմից բողոքարկման չբավարարման դեպքում որակավորման չեղարկման վերաբերյալ Պալատի որոշումը մնում է անփոփոխ: Բողոքարկման բավարարման դեպքում Հանրային վերահսկողության խորհրդի որոշման հիման վրա Պալատը կայացնում է որակավորման չեղարկումը դադարացնելու վերաբերյալ որոշում:

6.8. Փորձագետ հաշվապահի որակավորման չեղարկումը.

6.8.1. Փորձագետ հաշվապահի որակավորումը չեղարկվում է, եթե, Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն, արտաքին գնահատման արդյունքներով տրվել է «5» գնահատական: Նշված դեպքերից բացի, փորձագետ հաշվապահների որակավորման չեղարկման այլ հիմքերը սահմանվում են «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքով:

6.8.2. Որակավորման չեղարկումը, որպես կարգապահական պատասխանատվության միջոց, կիրառելու համար արտաքին գնահատման բացահայտումների թիվը և նշանակալիությունը սահմանված է Արտաքին գնահատման ընթացակարգերով:

6.8.3. Փորձագետ հաշվապահի որակավորման չեղարկման վերաբերյալ Պալատի որոշումը կարող է բողոքարկվել Հանրային վերահսկողության խորհուրդ՝ չեղարկման վերաբերյալ Պալատի համապատասխան որոշման ընդունման օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում կամ դատական կարգով:

6.8.4. Բողոքարկման ընթացքում որակավորման չեղարկման վերաբերյալ Պալատի որոշումը կասեցվում է: Բողոքարկման ընթացքում

փորձագետ հաշվապահի՝ Պալատին անդամակցությունը համարվում է կասեցված: Հանրային վերահսկողության խորհրդի կամ դատարանի կողմից բողոքարկման չբավարարման դեպքում որակավորման չեղարկման վերաբերյալ Պալատի որոշումը մնում է անփոփոխ: Բողոքարկման բավարարման դեպքում Հանրային վերահսկողության խորհրդի որոշման հիման վրա Պալատը կայացնում է որակավորման չեղարկումը դադարեցնելու վերաբերյալ որոշում:

6.9. Պալատին անդամակցության դադարեցումը՝ որպես պատասխանատվության միջոց

6.9.1. Պալատին անդամակցությունը դադարեցվում է՝

- 1) եթե, Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն, արտաքին գնահատման արդյունքներով տրվել է «6» գնահատական,
- 2) եթե, Օրենքի 32-րդ հոդվածի համաձայն, Պալատին անդամակցության կասեցման վերաբերյալ որոշմամբ սահմանված կասեցման ժամանակահատվածում կասեցման համար հիմք հանդիսացող խախտումները վերացված չեն,
- 3) եթե աուդիտորական կազմակերպությունը, «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի համաձայն, տրամադրել է ոչ հավաստի աուդիտորական եզրակացություն:

6.9.2. Անդամակցության դադարեցումը, որպես կարգապահական պատասխանատվության միջոց, կիրառելու համար արտաքին գնահատման բացահայտումների թիվը և նշանակալիությունը սահմանված է Արտաքին գնահատման ընթացակարգերով:

6.9.3. Անդամակցության դադարեցման վերաբերյալ Պալատին որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի համապատասխան որոշման ընդունման օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրվանից, եթե այդ որոշումը չի բողոքարկվել: Պալատը, որոշման ընդունման հաջորդ օրվանից սկսած՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մասին գրավոր տեղեկացնում է պատասխանատվության ենթարկվող անձին և Հանրային վերահսկողության խորհրդին: Ընդ որում՝ տեղեկացումը կարող է իրականացվել նաև հասցեատիրոջ էլեկտրոնային հասցեին համապատասխան գրություն ուղարկելու եղանակով, որի ուղարկման փաստով կհամարվի, որ հասցեատերը ստացել է գրավոր տեղեկացումը:

6.9.4. Անդամակցության դադարեցման վերաբերյալ Պալատի որոշումը կարող է բողոքարկվել Հանրային վերահսկողության խորհուրդ՝ դադարեցման վերաբերյալ Պալատի համապատասխան որոշման ընդունման օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում:

6.9.5. Բողոքարկման ընթացքում անդամակցության դադարեցման վերաբերյալ Պալատի որոշումը կասեցվում է: Բողոքարկման ընթացքում աուդիտորական կազմակերպության, աուդիտորի և փորձագետ հաշվապահի՝ Պալատին անդամակցությունը համարվում է կասեցված: Հանրային վերահսկողության խորհրդի կողմից բողոքարկման չբավարարման դեպքում անդամակցության դադարեցման վերաբերյալ Պալատի որոշումը մնում է անփոփոխ, և Պալատին անդամակցությունը համարվում է դադարեցված: Բողոքարկման բավարարման դեպքում Հանրային վերահսկողության խորհրդի որոշման հիման վրա Պալատը կայացնում է անդամակցության դադարեցումը չեղարկելու վերաբերյալ որոշում:

7. Կարգապահական վարույթի սուբյեկտների իրավունքները և պարտականությունները

7.1. Կարգապահական վարույթի սուբյեկտներն իրավունք ունեն.

- ա) ծանոթանալ կարգապահական խախտմանն առնչվող բոլոր նյութերին, դրանցից քաղվածքներ անել, պատճեններ հանել,
- բ) կարգապահական խախտման վերաբերյալ գործով տալ բացատրություններ և ներկայացնել ապացույցներ,
- գ) միջնորդություններ ներկայացնել և հայտարարություններ անել,
- դ) բողոքարկելու կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ որոշումները՝ համաձայն «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի:

7.2. Կարգապահական վարույթի սուբյեկտները պարտավոր են.

- ա) ներկայանալ (նիստերին մասնակցել տեսակոնֆերանսի ռեժիմով) կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման

ընթացակարգին մասնակցող մարմնի կանչով,

բ) բացատրություններ տալ գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող իրենց հայտնի փաստերի մասին,

գ) կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառող մարմնի պահանջով ներկայացնել փաստաթղթեր:

8. Կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու մասին որոշումների կատարումը

8.1. Սույն կարգին, ինչպես նաև սույն կարգով հիշատակված իրավական ակտերին համապատասխան ընդունված կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու մասին որոշումը պարտադիր է Պալատի բոլոր անդամների համար:

8.2. Արտաքին գնահատման ընթացակարգերի համաձայն, կախված Արտաքին գնահատման տեսակից, Աշխատանքային խմբի կողմից պատրաստված արտաքին գնահատման հաշվետվությունը՝ բացահայտումները և դրանց տեսակը, բացառությամբ «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի 20-րդ հոդվածով սահմանված աուդիտորական գաղտնիք պարունակող տեղեկատվության, ներկայացվում է Պալատի հանձնաժողովին, ինչպես նաև վերջինիս պատճենը՝ Պալատի գործադիր տնօրենին: Հանձնաժողովի անդամները և գործադիր տնօրենը ստորագրում են արտաքին գնահատման հաշվետվությունում պարունակվող տեղեկատվության չիրապարակման պարտավորագիր:

8.3. Հանձնաժողովի նախագահը, ստանալով Աշխատանքային խմբի կողմից պատրաստված Արտաքին գնահատման հաշվետվությունը, 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է այն Հանձնաժողովի բոլոր անդամներին, ինչպես նաև գրավոր հայտնում առաջիկա նիստի, օրակարգի և ժամկետի մասին, որը տեղի է ունենում Արտաքին գնահատման հաշվետվությունը ստանալուն հաջորդող 20 օրվա ընթացքում: *(փոփոխված 16.04.24թ N 15-L որոշում)*

8.4. Արտաքին գնահատման հաշվետվությունը Հանձնաժողովի համար հիմք է հանդիսանում Պալատի անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու կամ չկիրառելու վերաբերյալ Պալատի խորհրդին առաջարկություն

ներկայացնելու համար:

- 8.5. Հանձնաժողովը կարգապահական պատասխանատվության միջոցի վերաբերյալ առաջարկությունը հաստատում է արձանագրության (որոշման) տեսքով: Եթե հանձնաժողովի անդամը որևէ կերպ փոխկապակցվածության դրսևորում ունի սույն կետում նախատեսված որոշման հետ, ապա համապատասխան անդամը զրկվում է ձայնի իրավունքից և չի մասնակցում հարցի քննարկմանը: Սույն կետում նախատեսված փոխկապակցվածության հանգամանքը հաստատում է Հանձնաժողովը:
- 8.6. Հանձնաժողովը նիստի անցկացման օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պալատի գործադիր տնօրենին է տրամադրում նիստի որոշումը՝ հաստատված առնվազն Հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնության կողմից: Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Գործադիր տնօրենը 7-օրյա ժամկետում Խորհրդին է ներկայացնում նիստի որոշումը:
- 8.7. Համապատասխան առաջարկության հիման վրա Պալատի խորհուրդը որոշում է կայացնում Պալատի անդամին Կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ չենթարկելու մասին: Եթե Խորհրդի անդամը որևէ կերպ փոխկապակցվածության դրսևորում ունի սույն կետում նախատեսված որոշման հետ, ապա համապատասխան անդամը զրկվում է ձայնի իրավունքից և չի մասնակցում հարցի քննարկմանը: Սույն կետում նախատեսված փոխկապակցվածության հանգամանքը հաստատում է Պալատի խորհուրդը:
- 8.8. Պալատի խորհրդի կողմից ընդունված կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանվում է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքով, իսկ կարգապահական պատասխանատվության միջոց չկիրառելու մասին որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
- Կարգապահական խախտման վերացման հետ կապված ժամկետները սահմանվում են Պալատի խորհրդի որոշմամբ, եթե

Պալատի անդամների գործունեությունը կարգավորող իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ:

9. Այլ դրույթներ

- 9.1 Սույն Կարգի և Պալատի անդամների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի միջև հակասություն առաջանալու և/կամ այդ իրավական ակտերում փոփոխություն կատարվելու պարագայում առաջնությունը տրվում է վերջինին: